## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 օգոստոսի 2014թվականի N 16

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

Սիփանիկ համայնքի ավագանին որոշում է հաստատել օրակարգը

1. Բնակելի կառուցապատման հողամասեր նվիրաբերելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ կողմ

2. ՎԱՐՈԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմ

3. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ կողմ

4. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2014թվականի N 17

## ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի պահանջներով.

Սիփանիկ համայնքում բարեգործ Ֆրավին Փաթելը իր միջոցներով 2013թ կառուցել է բուժկետ և որպես երախտիքի նշան համայնքի ավագանին նրան շնորհել է պատվավոր քաղաքացու կոչում: 2014թ հավաքուծության զարգացման նպատակով համայնքի պատվավոր քաղաքացի Ֆրավին Փաթելը համայնքի 40 ընտանիքի նվիրաբերել է 15-ական հավ ու 7 կգ ցորեն, 2014թ համայնքին նվիրաբերել է նաև կանգառի համար նախատեսված 2 նստարան:

2013թ. Սիփանիկ համայնքի բուժկետի կառուցման և բուժկետի համար նախատեսված բուժսարքավորումների ձեռք բերման գործում իր մասնակցությունն ու մեծ ավանդն է ներդրել համայնքի բժիշկ Էռնեստ Բալույանցը, վերջինս 2014թ իր միջոցներով բարեկարգել է նաև համայնքի բուժկետի հարակից տարածքը:

Սիփանիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Վերոնշյալը հաշվի առնելով, նրանց կապը համայնքի հետ էլ ավելի ամրապնդելու նպատակով, որպես երախտիքի նշան Արարատի մարզի Սիփանիկ համայնքի բնակելի կառուցապատման հողերից նվիրաբերել.

1. Բարեգործ Ֆրավին Փաթելին 0.10113 հա /03-085-053-017/ ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասը:
2. Բժիշկ Էռնեստ Բալույանցին 0.10124 հա /03-085-053-016/ ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ կողմ
2. ՎԱՐՈԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ կողմ
3. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ կողմ
4. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ